

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բան ոչ է քարքառ լեզուոյն, այլ՝ խոկումն մտացն:
ՆԵՐՄԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ա. Բառի տարողութիւնը պատկերաւորութեան

Համեմատութիւնը համարում է գեղարուեստական պատկերի նախատարրը: Երբեմն գեղարուեստական մտածողութիւնը գրեթէ նոյնացուել է համեմատութեան հետ: Համեմատութիւնը կատարում է երկու առարկաների միջեւ՝ նրանց համար ընդհանուր հիմքի վրայ: Առարկան քացայայտում է մէկ այլ առարկայի նման յատկանիշի միջոցով: Համեմատութեան համար կարեւորը նրա եզրերը չեն, որոնք մնում են ինքնուրոյն, այլ այն յատկանիշը, այն նորը, որի հիման վրայ քացայայտում է առարկան: Թէ ինչն ինչի հետ է համեմատում հեղինակը, ցոյց է տալիս նրա ճաշակը, թէ ինչու է համեմատում՝ քացայայտում է նրա յուզական վերաբերմունքը: Թէեւ համեմատութիւնը որպէս լեզուի պատկերաւորման միջոց ամենահինն է, սակայն այստեղ եւս իր դերն է խաղում դարաշրջանի գեղարուեստական մտածողութիւնը: Միջնադարի հեղինակի համեմատութիւնները տարբերում են նոր ժամանակի հեղինակի համեմատութիւններից թէ՛ իրենց բնոյթով եւ թէ ներքին էութեամբ: Իր համեմատութիւնները Նարեկացին սովորաբար կառուցում է տեսանելի իրերի միջոցով հոգեկան երեւոյթները քացայայտելու եւ, ընդհակառակը,

վերացական պատկերացումները, մտքերը, հոգեւոր երեւոյթները առարկայօրէն շօշափելի դարձնելու համար: Նոր ժամանակի հեղինակները ձգտում են ստեղծել իրականութեան պատրանքը, առարկայական աշխարհի տեսանելի մանրամասները՝ անմիջական ճանաչման յատկանիշների միջոցով: Միջնադարի հեղինակին առաւել մտահոգում է համեմատելի առարկաների ներքին իմաստը: Բացի դրանից, միջնադարի հեղինակը մեծ տեղ է տալիս համեմատութիւնների թուարկմանը, գուգահեռականութեանը եւ այլն: Ի տարբերութիւն նոր ժամանակի հեղինակի՝ նրա համար քացի նիւթական եւ հոգեւոր աշխարհի ոլորտներից, կայ նաեւ վերերկրային, գերբնական, միստիկ պատկերացումների ու հասկացութիւնների ոլորտը: Ինչն ինչի հետ էլ համեմատում է միջնադարի հեղինակը, նախապէս հակուած է ընդգծելու երեւոյթի հոգեւոր իմաստը: «Միջնադարի գրողի երեւակայութիւնը - գրել է Դ. Ս. Լիխաչովը - մշտապէս պտտւում է գաղափարների յայտնի ոլորտում: Ընկնելով այդ ոլորտը, գրողը սակայն յաճախ ձգտում է հնարաւորին չափ աւելի լայն ընդգծել

այն, չքաւարարուելով միայն համեմատութեամբ, այլ իր երկի մէջ ներմուծում է իր համար ընտանի պատկերների ամբողջ շղթան: Հենց դրանով է բացատրւում, որ գրողը չի սահմանափակւում մէկ կամ երկու համեմատութեամբ, այլ կուտակում է համեմատութիւններ: Նոր գրականութեան գեղարուեստական մեթոդի տեսանկիւնից մենք պետք է ընդունէինք, որ թուով շատ համեմատութիւնների հարեւանութիւնը թուլացնում է նրանցից իւրաքանչիւրը առանձին եւ բոլորը՝ ամբողջութեամբ առած: Բայց միջին դարերի գրողը չի ձգտում ակնառութեան: Նրա համար անհրաժեշտ է եղել սպառել համեմատութեան առարկայի ներքին իմաստը, սպառել նրա որակները, յատկանիշները, գործառնությունները» (11): Ռուս նշանաւոր միջնադարագէտի այս դրոյթը հաւասարապէս վերաբերում է նաեւ Գրիգոր Նարեկացու համեմատութիւնների բնոյթին եւ նրանց էութեանը:

Համեմատութեան անդամները, ինչպէս յայտնի է, իրար հետ կապւում են որպէս, ինչպէս, նման, իբր, իբրեւ, քան, ըստ օրինակի, գոր օրինակ, զինչ եւ այլ բառերով: Օրինակ՝ «նման է եղբորորդին իմ այծեմանց, Որթունց եղանց» (ԳՆՏԳ 94), «Զի՞ կարմիր հանդերձ քո՞ ըստ լի կոխեալ հնձան» (ԳՆՏԳ, 104), «Ըստ աւրինակի խոովութեան մորկաց ծովու ծփեցայ» (Բան Զ, գ), «Իբր զնիւթ մոմոյ սպառեցայց՝ չնչեալ ի միջոյ» (Բան Բ, ք), «Անխառն իբրեւ զաւդ, մաքուր որպէս լոյս» (Բան Զ, ա), «Այս լուծութիւն կոհակաց կարծր է, քան զվէմ» (Բան ԶԵ, ա) եւ այլն:

Մատեանի մէջ Նարեկացու համեմատութիւնները հիմնականում ծառայում են քննարկական հերոսի բնութագրմանը, ներքողների մէջ՝ Աստուածամօր: Համեմատութիւնների մի մասը փոխառութիւն է Աստուածաշնչից, մի

մասը ստեղծուած է աստուածաշնչական եւ աւետարանական կերպարների, դրուագների եւ առասպելների օգտագործմամբ, բայց միշտ էլ նիւթը մատուցուած է ոչ թէ բառացի, այլ ստեղծագործաբար: Գրեթէ միշտ էլ Նարեկացին յղում է աղբիւրը՝ յայտնի երեւոյթի միջոցով իր նոր միտքը դիւրեւկալելի դարձնելու նպատակով: Ահա, օրինակ՝

*Հիւսեալ ընդ նմին զքանս
յիսներորդի սաղմոսին՝*

*Անթիւս գրեմ զպարտուցս սակ
անձինս մեղաց,*

*Քան զհիւղ երկրի հողմահոս
փոշւոյ՝*

Ընդ աւդս ամենայն տարածեցելոյ:
(Բան ԽԷ, ք)

Սաղմոսում ասուած է.

«...խոստովանիմ զհաշիւ պարտուց մեղացս քան զփոշի» (Սաղմ. Ծ, 5): Եթէ Նարեկացին յղած չլինէր աղբիւրը, ապա դժուար թէ առաջանար որոնելու պահանջ, քանի որ համեմատութիւնը ոչ միայն խիստ պատշան է քննարկական հերոսի ապրումներին, այլեւ մատուցուած է ստեղծագործական մօտեցմամբ: Եւ ապա՝ համեմատութեան համար կարող էր եւ աղբիւր լինել Ագաթանգեղոսի «ըստ նմանութեան մանրամաղ փոշւոյ հիւղէի» (12) արտայայտութիւնը:

Բերեմ ստեղծագործական մօտեցման մի օրինակ եւս.

*Իբր ասուի՝ ի ցեցոյ, եւ փայտ՝ ի
յորդանէ,*

*Ըստ իմաստնոյն քանի, ի խիբմանէ
սրտիս հալեցայ,*

*Իբր զոստայն սարդից մաշեցայ,
ըստ սաղմոսողին, եւ խոտան գտայ,*

*Իբր զամպ առաւառեայ եւ զգաղ
վաղորդայնի,*

*Ըստ մարգարէութեանն ձայնի,
սպառեցայ:*

(Բան ԻԱ, Ե)

Համեմատութիւնների այս շարքը վերցուած է աստուածաշնչական տարբեր գործերից: Բնագրում, տեղին համապատասխան, նրանք ունեն ուրոյն իմաստ: Նարեկացին սակայն բոլորը միաւորել է բնարական հերոսի մէկ եւ նոյն հոգեվիճակն արտայայտելու համար: Զիւնէին յղումները հատուածը կը հնչէր աւելի կուռ եւ բանաստեղծական: Մինչդեռ այս ձեւով

Նարեկացին ցանկացել է յենուել աստուածաշնչական խօսքի հեղինակութեան վրայ: Այլ մօտեցմամբ՝ նա իր խօսքը կարող էր բեռնաթափել «ըստ սաղմոսողին», «ըստ մարգարէութեան ձայնի» եւ նման արտայայտութիւններից: Որ Նարեկացին աստուածաշնչական համեմատութեան անդամները վերցրել է ստեղծագործաբար, կարելի է համոզուել նրանց գուգադրումից:

Աստուածաշնչում

Իբրեւ ցեց հանդերձի եւ որդն փայտի, նոյնպէս տրտմութիւն վնասակար է սրտի առն:

(Առակ. ԻԵ 20)

Մաշեցեր որպէս սարդի ոստայն գանձն նորա:

(Սաղմ. ԼԸ 12)

Վասն այնորիկ եղիցին իբրեւ զամպ առաւօտու եւ իբրեւ զցօղ վաղորդայնոյ, որ անցանէ:

(Ովսէէ, ԺԳ 3)

... Իբրեւ գիւս բռնաւ փառք նորա յերկանց ...

(Ովսէէ, Թ 11)

Մատենանում

Իբր ասուի՝ ի ցեցոյ, եւ փայտ ի յորդանէ . . . ի խիթմանէ սրտիս հալեցայ: (Բան ԻԱ, Ե)

Իբր զոստայն սարդից մաշեցայ ... եւ խոտան գտայ:

(Բան ԻԱ, Ե)

Իբր զամպ առաւաւտեայ եւ զցաւղ վաղորդայնի . . . սպառեցայ:

(Բան ԻԱ, Ե)

Իբրեւ գիւս վայրենի սրացայ . . . ի նախնին իմ սովորութիւն:

(Բան Ի, Գ)

Նմանութիւնն ակներեւ է, ակներեւ է նաեւ ստեղծագործական մօտեցումը: Աստուածաշնչական նիւթը Նարեկացին վերաիմաստաւորել է ըստ իր բնարական եւ-ի: Թէեւ համեմատութեան անդամները նոյնն են, սակայն էականը այն նոր իմաստն է, յանուն որի բանաստեղծը ստեղծել է իր համեմատութիւնը: Ստեղծագործական այդ ուրոյն մօտեցման ցայտուն օրինակ է Նարեկացու «Որպէս զքրծեալ աման խեցեղէն՝ փշրեցայ անարծարծելի» (Բան Ի, Գ) համեմատութիւնը: Աղբիւրը Եսայի մարգարէութեան հետեւեալ տողերն են. «Եւ կործանումն նորա եղիցի իբրեւ զբեկումն խեցեղէն անօթոյ բրտի, մանր խորտակելոյ, զի մի ոք գտանիցէ ի

նմանէ, որով հուր բառնայցէ կամ որով մարթիցէ առնուլ սակաւ մի ջուր» (Ես., Լ 14): Մարգարէի այս ծաւալուն համեմատութիւնից Նարեկացին ստեղծել է սփանչելի մի տող, որ համարժէք է թեւաւոր ասոյթի: Իբրեւ եզրակացութիւն՝ պէտք է ասել, որ Նարեկացին ստեղծագործաբար է մօտեցել աստուածաշնչական համեմատութիւններին՝ վերափոխելով ըստ իր մտայղացման եւ նպատակի: Խօսքի սեղմութիւնը նա հասցրել է կատարելութեան: Ոչ մի հեղինակութիւն չի նկնշել նրան փոխառու այդ համեմատութիւնների վրայ դնելու իր ոգու կնիքը: Նարեկացու հանճարը սակայն իր լիակատար ուժով դրսեւորել է այն համեմատութիւնների եւ բանաստեղծական

պատկերների մէջ, որոնք մա ստեղծել է բնութեան, իրականութեան եւ կեանքի ամենաբազմազան երեւոյթների սեփական ընկալմամբ եւ իմաստաւորմամբ: Նրա ոգին լոյս է սփռում այն ամէնի վրայ, ինչ գիտէ ինքը, ինչ տեսել ու ճանաչել է նա, ինչ գգացել ու ապրել է սիրտը: Հօր ու համարձակ երեւակայութեամբ նա իր հոգին դարձնում է իրերի ու երեւոյթների մի համանմանութիւն, ուր դիմառնաբար կեանք ու ոգի է առնում ամէն ինչ: Երեւոյթների եւ իրերի բազմազանութիւնը նրա համար հանդէս է գալիս իրրեւ պարզ շինանիւթ: Կարելի է՝ այդ բոլորը մա օգտագործում է կրօնակա՞ն, հոգեւո՞ր, թէ՞ աշխարհիկ մտքեր ու գգացմունքներ արտայայտելու համար: Համեմատութեան անդամները մա փոխադարձ կապի մէջ է դնում ըստ նրանց ներքին ընդհանրութեան:

Իբրեւ միջնադարի բանաստեղծ՝ Նարեկացու համար Աստուած ճանաչելի է միայն իր ստեղծած տեսանելի երեւոյթների ու գոյերի միջոցաւ: Զուրը կարող է փոխարկուել սառոյցի, հեղուկը՝ պինդ նիւթի: Նարեկացու համար դա բնական պատճառի հետեւանք է, այլ աստուածային կամքի արտայայտութիւն:

*Որ իբր գական մի անձուկ նաւի
ի վերայ շարժութեան ալեաց՝*

*Ձանքաւ թանձրութիւն գետնոյս
դղորդես,*

*Որով ծանուցեալ լինիս ամենից
հատուածոց՝*

Թէ իցես աներկրայելի:

(Բան ԿԳ, գ)

Աստուած փոփոխում է տարրերը՝ իբրեւ անցաւոր եւ դարձեալ միացնում իրար՝ իբրեւ յարակայ: Այդ բոլորը կատարւում է տեսանելի աշխարհի գգայական երեւոյթների եւ իրերի ոլորտում: Բայց կայ հոգեւոր ոլորտը, որ աւելի կարելի է Նարեկացու համար: Եւ համեմատութիւնը վերաբերում է նոր

համեմատութեան. նոյն հեշտութեամբ Աստուած կապում կամ արձակում է մեղքերի բազմութիւնը: Նա կառավարում է արեգակի անգգայ էութիւնը, ինչպէս սանձահարուածի: Այսպէս էլ կարող է հանդարտեցնել մարդկային բնութեան չար հակումները:

Յաջորդ համեմատութիւնները եւս կազմում են նոյն սկզբունքով: Բնութեան երեւոյթի մակարդակի վրայ տեսնել իրական, կենդանի հայեցութիւնից ծագած յարաբերութիւններ, ապա փորձել թափանցել նրանց հոգեւոր եւ միստիկ մակարդակների մէջ: Սա կապում է բանաստեղծի աշխարհայեցութեան եւ գեղագիտական հայեցակէտի հետ: Առանց այդ մակարդակների փոխադարձ կապերի ըմբռնման հնարաւոր չէ թափանցել Նարեկացու աշխարհը: Անշուշտ, Նարեկացին ունի համեմատութիւններ, որոնք ունեն աշխարհիկ բովանդակութիւն եւ կամ նրանց մէջ սփռուած է կրօնական ենթաշերտը: Իր ստեղծագործական աշխատանքը, օրինակ, Նարեկացին պատկերացրել է որպէս սերմնացանի վաստակ՝ երազելով բերկրալի սրտով հասնելու հնձին: Բայց մա ապրել է նաեւ հողագործի այն տագնապը, որ կարող է յանկարծ անպտուղ մնալ իր վաստակի մէջ:

*Մի՛ եղէց անպտուղ ի փոքր
վաստակոյս՝*

*Իբր ապաջան սերմանող անբերրի
երկրի:*

(Բան Բ, գ)

Նարեկացին գեղագիտական սուր պահանջ է գգացել իր բարդ ու հակասական ապրումներն ու խոհերը դարձնել շօշափելի եւ առարկայական: Տիեզերքի մեղքերի կոյտեր հասկացութիւնը վերացական է եւ անորոշ: Մինչդեռ հողի կոշտի եւ ջրի պղպջակի հետ տարած համեմատութիւնը

պատկերը դարձնում է պարզ ու բնական, գեղեցիկ ու ներգործուն։ Ահա՛ (Բան ՀԴ, դ) այսպես.

*Ջի՞նչ երեւեցի յաչս ամենակալիդ
քո առատութեան*

*Կոյտ՛ մեղանաց ամենայն
տիեզերաց.*

Ահա կոշտ մի հողոյ դիրափխրելի՛

*Ի կարծրութենէ՛ բախման
վանեցեալ՝ իրր զպղպջակ անձրեւոյ՝*

*Բազմագեղ հոսմամբ քո կամաց
չֆացեալ՝ պայթեալ անդստին։*

Սովորաբար լաւագոյն համարում են այն համեմատութիւնները, երբ անշունչ առարկան համեմատում է մարդու, կենդանի էակի հետ։ Այսպէս է ստեղծուած, օրինակ, Նարեկացու համեմատութիւններից մէկը. խորտակուած նաւի բեկորները ծփում են ալիքների վրայ՝ անօգնական ու խեղդուող բանականների նման.

*Նշմար՛ սակաւ մնացուածոցն, ի
ծայրից ծփմանց ազդելոյ ծովուն,*

*Իրր խողխողեալ բանաւոր,
ողորմագին բախճանաւ հեծէ։*

(Բան ԻԵ, գ)

Խաչափայտը Նարեկացին համեմատում է շուշան ծաղկի հետ։ Յիսուսն իր ծանր խաչափայտը տանում է թեթեւ, ինչպէս շուշան ծաղիկ։ Նա գնում է խաչուելու՝ իր մահով անմահութիւն պարգեւելու համար մարդկութեանը։ Սա՛ կրօնական հայեցակէտից։ Պատկերը, սակայն, ունի նաեւ գիտակցուած մահով մահուանն արժանավայել ընդառաջ գնալու խորհուրդ.

*Ստանձնեալ, իրր զպարտական,
զփայտն վշտաց,*

Որպէս զծաղիկ շուշանաց հովտաց՝

Ուսով բերեալ զգէնն կենաց,

*Ջի՛ յարհաւրաց գիշերայնոց
գիրակերտս գահաւորակս*

*Մարմնեղէն գոյութեանս
պահպանեցէ՛*

*Ի դատապարտութեանն վայրի՛
իրր ի խրախճան խնջոյից։*

(Բան ՀԷ, գ)

Քիչ չեն նաեւ ժխտական կոչուած համեմատութիւնները։ Նման համեմատութիւնը կառուցում է հակադրութեան միջոցով։ Քնարական հերոսի հոգեկան շատ վիճակներ Նարեկացին տուել է ժխտական համեմատութիւններով։ Ահա՛.

*Ոչ այնքան սարսեցի եւ պատկա-
ռեցի*

Ի սաստկութենէ՛ քումդ հրամանի,

Որքան ալիք ծովուն՝ յեզերացն։

(Բան Զ, գ)

Կամ՝

*Չեոն քո միսեցի յիս առաւելապէս
այժմէն վերստին՝*

*Ծանրս առնելով զքեոն պարտեացս,
քան զֆաղցրութիւն պարգեւացդ։*

(Բան ԽԹ, գ)

Աւելի քարդ ու եռիս են Նարեկացու գուգահեռ համեմատութիւնները։ Դրանց իւրաքայտկութիւնն այն է, որ համեմատութեան ժամանակ բացայայտում է ոչ թէ մէկ ընդհանուր յատկանիշ, ինչպէս երկու առարկաների համեմատութեան դէպքում, այլ գուգահեռ ընդհանուր նմանութիւնների մի ամբողջ շարք։ Համեմատութեան առարկան լինում է մէկը, համեմատութեան միջոցները՝ բազմաթիւ։ Ժամանակակից ընթերցողին երկու-երեք համեմատութիւնից յետոյ միւսները կարող են թուալ անհարկի։ Ուրեմն՝ ինչո՞ւ է Նարեկացին դիմում համեմատութիւնների կուտակման։ Ընդհանուր՝ երեւոյթ է դա, թէ՞ ստեղծագործական նախասիրութիւն։ Եւ մէկն է, եւ միւսը։ Պատկերաւորման միջոցների կուտակման սէրը յատուկ է միջնադարի հեղինակներին։ Դա բխում է նոյն գաղափարը տարբեր նրբերանգներով մատուցելու պահանջից։ Ձգտելով որքան

հնարաւոր է համակողմանի բնութագրել երեւոյթը, Նարեկացին դիմում է բազմազան համեմատութիւնների՝ ըստ իր մտայղացման եւ գաղափարական միտումի: Դա ստեղծագործական երեւակայութեան փմահան խաղ չէ, այլ լիակատար ինքնադրսեւորման անհրաժեշտութիւն: Բերեմ մի օրինակ: նարեկացու պատկերացմամբ սրբերի դասերը անմահ են եւ երկնային երանութեան մէջ օրհներգում են Աստծուն՝ բարեխօսութիւն հայցելով նաեւ բանաստեղծի համար: Նարեկացին ցանկանում է ինքն էլ իր խօսքը միացնել նրանց մաղթանքներին, բայց զգում է՝ ինքն ո՛ւր, նրանք՝ ուր: Այդ տարբերութիւնը նա տալիս է գեղեցիկ, բայց հակիմաստ համեմատութիւններով:

*Եւ ես ընդ նոսին՝ իբր դառնութիւն
եղեալ ընդ քաղցու,*

*Կամ տատասկ՝ ընդ ողորկութեան,
Տգեղութիւն՝ ընդ գեղեցկութեան
մարգարտի,*

*Եւ հող՝ ընդ յստակութեան ոսկւոյ,
Եւ կամ քարինս անարգս՝ ընդ
պայծառութեան արծաթոյ,*

*Բացասութիւն՝ ընդ ճշմարտութեան,
Եւ կամ աւագ ինչ ատամնառու՝
ընդ կակղութեան զանգուածոյ հացի:*

(Բան 2Բ, դ)

Համեմատութիւններից իւրաքանչիւրն այստեղ ունի իմաստային իր նրբերանգը, ներգործման իր ուժը: Ամբողջութեան մէջ նրանք ոչ թէ թուլացնում են իրենց ուժը, այլ, ընդհակառակը, ասես գումարում են իրար, միտքը մի ոլորտից փոխադրում են մէկ այլ ոլորտ, մի յատկանիշից մէկ այլ յատկանիշ՝ առարկայականը զուգորդելով վերացականի հետ, մտահայեցականը՝ զգայականի: Քիչ է ասել՝ ազդուել, Նարեկացուց ուսանել են բոլորը: Բաւական է ասել, որ Արովեանի ծաւալում, զուգահեռ եւ բազմանդամ համեմատութիւնների մէջ ակնառու է Նարեկացու ոճը:

Բառը գեղարուեստական խօսքի մէջ յաճախ գործածւում է անուղղակի իմաստով: Այդպիսի գործածութիւնը նարտասանութեան մէջ կոչուել է փոխակերպութիւն, գրականութեան տեսութեան մէջ կոչւում է այլաբերութիւն: Ընդունուած է այլաբերութեան երեք տեսակ. ա) փոխաբերութիւն (մետաֆորա), բ) փոխանունութիւն (մետոնիմա) եւ գ) շրջասութիւն (պերիֆրազ):

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ